

# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

## Հարուստ մարդ, աղքատ մարդ



Written by: Edward Hughes  
Illustrated by: M. Maillot; Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
Adapted by: M. Maillot; Sarah S.

Story 44 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)

*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.


Հայերէն

Armenian


Յիսուս գիտեր, թէ տաճարին  
առաջնորդներէն շատեր դրամը  
Աստուծոյ աւելի կը սիրէին:



Ան պատմեց, թէ ինչ եղաւ երկու մարդոց,  
եւ ինչու անիմաստ է հարստութիւններ  
ունենալ առանց Աստուծոյ:  
Հարստութիւնները չեն  
կրնար կեանք գնել  
առանց Աստուծոյ  
երկինքին մէջ:



Հարուստ մարդ մը կար, որ գեղեցիկ հագուստներ ուներ, որոնք շատ սուղ էին: Ան թագաւորի պէս կը հագուէր:




3

Հարուստ մարդը նաեւ շատ լաւ կ'ուտէր: Ամէն ճաշ կարծես խրախճանք էր: Այնքան դրամ ուներ, որ ցանկացածը կրնար գնել ուտելու, իբր նախաճաշ, ճաշ եւ ընթրիք կամ անոնց միջեւ:



4

Հարուստ մարդուն փողոցի դրան առջեւ աղքատ, հիւանդ սոված մուրացկան մը կը նստէր: Անոր անունը Ղազարոս էր:



5

Խեղճ Ղազարոսի մարմինը վերքերով լեցուն էր: Ան հիւանդութիւն ուներ: Ան վերքեր եւ սպիւնրու ուռեցքներ ուներ, որ ստացած էր չար մարդոցմէ: Կրնար հիւանդ ըլլալ, որովհետեւ լաւ ճաշ, կարթ, բանջարեղէն եւ միս չուներ սնանելու:



6

Ղազարոս ճաշ կ'աղաչէր: Ան ուրախ կ'ըլլար նոյնիսկ եթէ մնացորդ ուտէր այդ հարուստ մարդուն ճաշին:



7

Փողոցին շուները երբեմն կը լիզէին անոր վերքերը, այդ խեղճ յանձնուած մուրացկանին: Կարծես մէկու մը հոգը չէր, որ Ղազարոսը սովի մէջ էր:



8

Առաւօտ մը  
Ղազարոս  
չ'արթնցաւ:  
Այս խեղճ  
տղամեծ եւ  
անընկեր  
մուրացկանը  
լքեց այս  
կեանքը:  
Ղազարոս  
մեռած էր:




9

Ղազարոսի համար  
ուրախութիւն էր այդ  
վայրկեանը, որ ան մեռաւ: Յիսուս ըսաւ,  
որ հրեշտակները զինք գրկեցին, որպէսզի  
ըլլայ Աբրահամի հետ: Ղազարոս Աստուծոմով  
հանգիստ գտաւ:



10

Հարուստ մարդն ալ մեռաւ: Ամբողջ իր դրամը չէր  
կրցած իր կեանքը փրկել, երբ մահը եկաւ որեւէ  
մէկը չկրցաւ կեցնել զայն:



11

Հարուստ մարդը թաղուեցաւ: Թերեւս մեծ  
թաղումով: Թերեւս մարդիկ կը գովեն հարուստ  
մարդուն, որ խոհեմ եւ յաջող էր: Սակայն անոնց  
գովասանքները չօգնեցին անոր, հարուստ  
մարդը, դժոխքի մէջ էր:



12

Դժոխքին մէջ հարուստ մարդը կը պոռար.  
"Հայր Աբրահամ, Ղազարոսը դրկէ, որպէսզի իր  
մատը դպցնէ ջուրին եւ քիչ մը պաղեցնէ լեզուս,  
որովհետեւ շատ կը  
չարչարուիմ այս  
բոցերուն մէջ":



13

"Կեանքի մէջ ունեիր ամեն  
ինչ եւ Ղազարոսը ոչինչ".  
Աբրահամը յիշեցուց  
հարուստ մարդուն:  
"Հիմա Ղազարոսը  
հանգիստ պիտի ընէ եւ  
դուն տառապիս: Որեւէ  
մէկը չի կրնար դիմացի  
հակառակ հսկայ ծոցը  
կտրել, որ մեր եւ քու մէջ է":



14

"Ղազարոսը դրկէ, որ գգուշացնէ իմ հինգ եղբայրներու աղաչեց հարուստ մարդը: Չեմ ուզեր, որ ինծի պէս հոս տառապին եւ սարսափելի վերջ ունենան":




15

"Քու եղբայրներդ ունին Աստուծոյ խօսքը", ըսաւ Աբրահամ, "եթէ հինգ եղբայրներդ չեն հաւատար Սուրբ գործին, ապա չեն հաւատար եթէ նոյնիսկ Ղազարոս ետ գայ մեռելներէն":



16

Երբ Յիսուս վերջացուց պատմութիւնը այս հարուստ մարդուն եւ Ղազարոսին, թերեւս տաճարին առաջնորդները իրենք իրենց հարց տուին.



17

"Արդե՞ք ես կը սիրեմ երկրաւոր հարստութիւնները աւելի քան զԱստուծ՞": Հիմա անոնք գիտէին, թէ ինչ կը պատահի անոր եղեր Աստուծոյ խօսքէն կը շեղի:



18

Հարուստ մարդ, աղքատ մարդ:

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 16

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

